

բարեալ ընդ ձորն Ընծայից, որոյ կըքն ընդ գաւառն Հիր քաղաքի իսկ նա . . . անցեալ օթադայեցեալ ի գեօղն Փառոտակ (այժմ ափ Փառ, Վառ, Վօռ) յանդիման քաղաքին ,, նոյնն, երես 296. « Եւ մեծանուն իշխանն (Վաշան) ըստ նախնական սովորութեանն չուարարեալ ընդ ձորն Ընծաճոյ, եկն էջ ի Խերական կոչեցեալ գաշտ, և կամեր անցանկ ի ձմերոցս արբունի ի գաւառն Ճուաշ (այժմ Չախաշ, Ճուաշ լիսան միայն կոչուած է անոյ) յաւանն Մառական (այժմ Մարաբան, Մէրէբան). երես 55. « Բառնայ Երուանդ առ սահմանօրն Ատրպատականի ի ձորն Ընծաճոյ, իսկ Ընծաճոյ ձոր վասն այն կոչեցին, բազում ունեկոյլ ինչս ,, Արդէս Թօմաս Արծրունին, նոյնպէս միւսները, ուր ուրիք Ընծաճոյ ձոր, Ընծախաձոր, ուր ուրիք Ընծայից, Ընծաճոյ կամ Չոր Ընծաճոյ ևս են անուանուած, որ մի և նոյնն է. Ինչպէս երևեցաւ վերն, Ընծաճոյ ձորն աւարտուած է Խոյ քաղաքի գաշտումն. Էս ձորի մէջին եղի է և կայ մինչև ցայսօր մին զեղ բերդով, որին Կոթու են կոչուած. այժմ Թ. Արծրունին ասուած է սրտ համար, երես 261. « Չամուրն Նկան (ձերևս այժման Եկանն է) ի Թաւնուան գաւառի, և Չամուրն Կոտոր ի ձորն Ընծայից ,, երես 303. « Ապուրուան կոչէ զԱշոտ եղբարբն հանգրծ ի բերդն Կոտորոց . . . ի միւս զԻշերի կախայ կապեալ զնոսա, և յղէ զԱշոտ և զԴուրգէն ի բերդն Նկան կոչեցեալ ,, երես 305. « Եւ հասեալ զղլուին բարձեայ տանի յամբոցն Աշինոս, ուր էր Դուրգէն, նմանապէս և ի բերդն Կոտորոց ի ձորն Ընծայոց, յորում էր Աշոտ. ,,

(Մեծեւն ի յաղարտումն ինքն):

ՌՐՐՐ ՕՐՈՍՏՈՍ ՅՕՆ ԼԱԿՍ ԼԱՌԱԳԵՆԱՅ
ՃԱՆԱՊԱՐԶՈՐԴՈՐԹՅՈՒՆ
 (Ն-Բ-Ն-Ի-Ն-Ի-Ն)

Գ. Ն. Ս. Ս.

Մեկնիք ի Կերէ. — Կապա. — Եղբարեցի. — Գլխաւոր. — Եկեղեցի Լայոց. — Վեց զերի ազգուիք եղբարեցոց (Երբեքոց), — Արևելեան ազգաց զազախար զվաճառուց կոնակց. — 17 ամբողջ Թուսոց յափուս Սեու ծովու. — Կշմակութիւն նոցա. — Զիսպացութիւն մեր. — Գանձան իշխան Միկայելայի, արգիւնք նորա և. կեցեալ. — Ասասոյ. — Երևանի. — Գուրայի. — Գօրի. — Արցոն. — Մցխեթ. — Տփլիս:

Յառաջում աւուր ամենան Օգոստոսի 1843 ամի մտեալ ի շոյնուան, որ կայր ի նաւահանգստին Կերէի (12) ի վերայ ծովուն Ազախու, կար յերրորդ ժամուն յԱնապա. զայս ամբոց հիմնեցին Տաճիկք յամին 1784. իրր տեղի տարւաւ առթեան ընդ Եղբարցիս (Չերքեղս). ուստի ընդ վաճառուցն և քաղաքական յարարութիւնք լինեկէն Կովկասու ընդ մէջ Կ. Պօլսոյ և Բախաբոյ. Աստ Տաճիկք վաճառեկէն Եղբարցոց զհանգրծս և զէնս, և յետինքս նոցա զգոտերս իւրեանց, զմանկունս, և զզերեմբաեալ Ռուսո, մինչև զօրք Ռուսոց մարտ եկեալ կորցեցին զայս տեղի ի Տաճիկաց (13):

(12) Կերէ, բարեանեի և վաճառաւ քաղաք Տարբիկեան նահանգի, շինեալ յեր ծովուն Ազախու, և տարածեալ մինչև ցեղաւն, որ յանուն մեծին Մէկրայոսոց. աստ էր ի հրնումն քաղաք Գանակապէտն, շինեալ ի Յունաց 500 ամբոց յասալ քան զԲերտաս. բնակիչք տար ոչմօ հասանեն ց10,000 հ. ի քաղաքիս յայտնի են եկեղեցիք Ռուսոց երեք, Լայոց եկեղեցի մի փոքրիկ կամ աղօթատուն զոր վեց ամբոց յասալ հաստանցին բարեպաշտն Լայ վաճառականք քաղաքին և ունին ի գաւառն նորին զպոց փոքրիկ և բնակարան քահանայի. Հոսովեականց եկեղեցի, մի, և Լըլից Միսազօզս, վարժարանք երկուց սեւեց, Բանկարան հնութեանց, արարան, Բասրան, ընթերցարան հասարակաց, զարժարանք (փարբիկ), հիւանդանոց, զեղարան, հիւրանոց, և ը. շնորձ մեծ ունիմ հիւրանարան հասարակաց տեղոցս, որք ստակեցին զտարազեր պանդխտութիւն իմ գաւառս քան ի վերջ 1866 ամի Կ. Ք.:

(13) Այ տեղորդ ինչ համարիք յայտնել տասանօր, թէ ի Թուրքմանութեան մերում չանոցաք ինձամով և անթերի փօթեի ի մերս բարբառ որ ինչ բաժք էին զազէս և քաշ:

Հրամանատար տեղւոյ՝ Փորուչիք Փոն-Բոժ, ունէր ի տեղւոցս պարտէզ գեղեցիկ. ուստի լե-րինք Աովկասու երեւին աչաց իրրև զհողաբլուր. աստ զկնի՝ պատուեցաք թէիւ. ի բերդապահ գնդի յիշատակեալ հրամանատարին գտանէին հարիւ-րաչափ Եգերացիք. և էին սոքա արք կայտառք, միջահասակք, բարեկազմք, փտիկամարմինք, այլ ջղայինք. արիւն հարաւային (ջերմ) վազէր յե-րակս նոցա. կերպարանք նոցա զսրամտութիւն և զուշիմութիւն յայտ առնէին. ընդ նմին և զխառ-նուրդս յատկութեանց, Թաթարաց, Մոնղոլաց, Եւրոպացւոց և Ասիացւոց. շատք ի նոցանէ կա-պուտակն էին քան սեակն:

Յայտ է թէ Եգերացւոցն ազգ չէ նախնասոր:

Պ. Փոն Բոժ, հրամայեաց ձիարչաւս խաղալ առաջի մեր, զարմանալի էր սրննթացութիւն ձի-ոց. տարօրինակ՝ արագադարձ շարժուածք հծե-լոցն. և ընտիր՝ զինամարութիւնն և հանդերձ նո-ցա. որք կազմէին վայելուչ և ազդու տեսարան. եղեալ առանձինն առանձինն թերթս թղթոց ի վերայ գետնոյ, այր իւրաքանչիւր յարշաւէն սը-րննթաց, և հար ատրձանակաւ, և ոչ մի ի ութոց նոցա էանց ընդ վայր:

Տեսանէաք երբևմն և զԱրխագս, ազգ բնակեալ ի հարաւային արևմտակողմն Եգերացւոց. և նն սոքա փոքրահասակք, վտիտք մարմնով, սեա-հերք, կապուտակն և արծուունկն. զոյն երեսաց նոցա հայի կէտ մի ի սեաւն և կէտ մի ի զեղինն. իսկ աղնուականք նոցա որոշին գեղատիպ կերպա-րանօք. երևի թէ այլ է ծագումն ժողովրդեանն և այլ վերջնոցս: Յերեկային պահու ելեալ անտի հա-սաք ի միւս օրն ի Առջուկ-Քալէ, նաւահանգիստ անուանեալ ի Ռուսաց՝ Նովորոսսիյսկիյ. ուրանօր գտանին առատ, բազմերանց տեսակք մարմարիոն և գրամիտ քարանց:

Անտի դէմ՝ եղեալ մտաք ի հետեւեալ օրն ի Փիցցունթայ. սա իցէ թերևս անուանեալն ի հինսն Փիթիուսնթա. զորմէ հաստատեն թէ էր ի միջին

դարս մեծ բնակութիւն զաղթականաց Գննու-ցւոց. ուր աքսորեցաւ և սուրբն Յովհան Ասկեր-րան (14), այլ չև հասեալ մեռաւ ի ճանապարհի. աստ կան մնան տակաւին աւերակք հոյակապ և-կեղեցւոյ կառուցելոյ ըստ Բիւզանդեան ճաշակի. և շուրջ գնդօք բուսեալ կան որթք խաղողոյ ի վերայ կամարացն, և ըստ կողմանցն տեսանին հին նկարք. արժան էր առաւել քան զիմն առնել ճիշդ խուրարկութիւն սորին. մօտ եկեղեցւոյս ի հիւսիսակողմն ի վերայ լեռանցն գտանի եկեղեցի Հայոց և վանք փոքրիկ. ուր յաճախեն Արխագք յերկրպագութիւն, զորմէ ասնն ունել և մատնա-դարան:

Տեսի աստանօր զհայրենակիցն իմ Պ. Փոն Միւնգաուզին ըմբռնեալ ի Աովկասեան ջերմ սաստկագին, և այնչտի ծանր էր հիւանդութիւնն, զի մինչ անգամ այցելութիւն հայրենակցին չա-րար ի նմա ազդեցութիւն ինչ. զոր և ի վերա-դարձին խնջ այսր ի վերջ Սեպտեմբեր ամսոյ գտի փոխեալ ի կննացս:

Եկաք անտի ի նաւահանգիստն Բաւրոսա. ու-րանօր հանդիպեցաւ մեզ փոքրիկ նաւ տաճկական յորում կային նաւախարքն և միւս Տաճիկ ոմն, յետ նոցա իշխան (քննազ) մի Եգերացի (2եր-քիզ) ծառայիւք իւրովք. դարձեալ կին մի ի չրջակայ տեղեաց, ընդ նմին վեց Եգերացի ազնուներ յերկոտասանամեկից ցճնդեղասանամայք, զորս տանէին ի վաճառս ի Ա. Պօլիս: Գնդապետ Փոն-Բուղբերգ, հրամանատար զինուորական նաւուն մերոյ և իշխող նաւահանգսից և ամրոցաց ա-րևելեան ափանց Սեաւ ծովու, ետ ածել զնոսա առ մեզ. և առ ի թափել ի վաճառուցն, խոս-տացաւ Եգերացի օրիորդացն աղատել զնոսա, միայն զի ինքեանք յանձն առցին կամ դառնալ ընդ իշխանին իւրեանց ի հայրենիս՝ կամ ամուս-նանալ ընդ Ռուսս ըստ իւրեանց ընտրանաց, կամ

(14) Ի պատճառս աներկիւզ յանդիմանելոյ գանդիջ ա-րարս թագունոյն Եւտարսեայ կնոջ Արկադեայ կայսեր, աք-սորեցաւ ի Կախսոն քաղաք փոքուն Հայոց, ուր կացեալ զամ մի, վերստին և անտի հրաման եղև տարազրել յԱրարիսոն ամ-րոցն, այլ հիւանդացեալ ի ճանապարհի, փոխեցաւ առ Ա-տուսով: Փիցցունդա անուիւզ, Թերևս Արարիսոն է Հայերէն:

խարճու մերմէ. իսկ ի մնացորդաց զպիտանիսն և զկարե-ւորան ծաղկազաղ արարեալ, Թողաք դայն միայն ի բաց, որ մեզ զուր վտտակ, և քեզ ընթերցողիդ գուցէ ստաղթուկ բերէր:

զալ ընդ մեզ ի Քերմանիա ուր կանայք առհասարակ վայելին զիւրիւն ազատութիւն. իսկ թէ ոչ յօժարեցին ի մի յերիցանցս՝ յայնժամ մնայ նոցա կանակ ի վաճառ ի գերեվաճառանոցն Վ. Պօլսոյ. և զիւրոյ թուի ձեզ զի՛նչ ընտրեն սոքա. ամենկրին միաձայն, և առանց վարկեան մի ընդ առաջարկութիւնսն խորհչոյ՝ ազադակեցին. ի Վ. Պօլսոյ, այն է երթալ ի վաճառ Այլ ի քննին առեալ զբարս և զընաւորութիւնս արեւելեան ցեղեցոյ պրոցիկի. ասեմք թէ ընդ պատասխանի դոցա ոչ որ զարմացիլ, գնին և վաճառելն զկանարս՝ արմատացեալ սոսորութիւն է ի նոսա՝ այր իւրաքանչիւր գնէ աստանօր իւր կին ի հօրէն կամ ի մօրէն դստերն. բազում անգամ գորանան կամ փախուցանեն. ուստի և վաճառումն չէ բնաւ ամօթ ինչ արեւելեան կնոջ. այլ մանաւանդ փառք և պատիւ տոհմին իւրոյ. դուստր նոցա ի մանկութենէ անտի դտանի ի ծառայութեան ի տան հօր իւրոյ և եղբարց. նա ի պարծանս զրէ անձին յորժամ որ զինչս իւր գնէ առ ի ձեռս բերելոյ զնա, այն է ի գնել ի գերութենէ ընտանեաց նորա, և ի գին անձին իւրոյ ճանաչէ զարժանաւորութիւն իւր. որչափ առաւել է զինն, այնչափ և նորայն արժանաւորութիւն. վասն որոյ ասեմք զարձեալ, չնն ինչ զարմանք, յորժամ կամաւ երթային նոքա ի Տաճկաստան ելանել ի վաճառ. ծնօղք նորա գիտեն, թէ անդ կայ մնայ բազմ գտտերն իւրեանց, քան ի տան նոցին. և դուստրն զգերութիւնն ի տիկնութիւն փոխելոյ ակնկալութեամբ յանձն առնու զայն ուրախութեամբ. ըստ որում ի հայրենիս իւրեանց ճակատադիր է նոցա ունել ամուսին համարիւն, բիրտ և գոռոյ. որ իբրև ազախին տանջէ զիկնն յամենայն գործս ծառայականս. իսկ Տաճիկն ընդհակառակն՝ է համբերատար, ամուսին աշխատասէր և հայր գորովագութ. այս վաճառ սահմանեալ է ոչ սակաւ ժամանակաւ յառաջ. և մարթ է ասել, թէ ելեալքն ի վաճառ, յամենայն ուրեք ի Տաճկաստան, գտանեն զարեանառուս և զհայրենակիցս իւրեանց: Քին վաճառաց դստերացն Եգերացոց և Վրաց ի Վ. պօլիս հասանէ երբեմն ց10.000 դահեկան. այսչափ գնոյ գնեն զնոսա ոչ վասն սոսկ գեղեցկութեանն, այլ և վասն առանձին

կրթութեանն՝ որով յառաջագոյն պատրաստեն ի պէտս կանանեաց մեծամեծաց. առ ի վարժել զանկիրթ ազգիւունս՝ վաճառող նոցին տայ վարձու ի կանանոց մի (հարեմ) ի կրթութիւն. իբրև ի զուխ տարին զվարժումն, այն է ուսան կարել, պարել, երգել, վէպել (հեքեաթ ասել), հարկանել զնուազարան ինչ. և երբեմն ընթեռնուլ, գրել, վաղժադակի ձեռաց ի ձեռս վաճառեն. զազգիւունս Վրաց և Եգերացոց (Չերքեզաց) չըհանն երբէք ի գերեվաճառանոցն, զայս առննն միայն ընդ Եթովպացիս և Քախչիկու Հիրտն կարծիս ի մեջ բերէ թէ՛ այսու վաճառմամբ Ասիացի աղք ստացան զգեղեցկութիւն. Տաճիկք՝ սերունդք Հոնաց, իսկ զբանն այնչափ տգեղադէմք, ի ձեռս բերին զգեղեցկութիւն ի յարաբերութենէն ընդ Վովկասու:

Նաւեալ և աստի կեպ ի Սօքում քալէ, զորմէ ասի լինել Քիոսկորեայն հնոց. զոյ աստ աւերեալ ամբոց մի կանգնեալ ի Տաճկաց, յորում և փայտակերտ անձև ապարանք փաշայի Անտի զուղի կալեալ ի չորսն Օդոստոսի խարխիս արկաք ի նաւահանգիսան Բէզուս-Քալէ բարետեսիլ քաղաք. բարեհօղմ կանակ, և ծով հեղաբարոյ ձեռնտու էին ասորժելի նաւադնացութեան մերում. շուրջ զշոգնաւաւն մերով կաթնէին անգադար դիվինք. ասիւնքն, առ որս մերձն նաւաք բազում անգամ, տեսարանս պատկերացուցանէին առաջի մեր սրտառուչս և զիւթօղս. յորով անգամ տեսանէաք առ ափամբքն ի ճանապարհին զՂզբրացիս յերթալ է զի միայնակ, է զի բազմութեամբ և ամենքին վառեալք շքեղատարազ հանդերձիք իւրեանց:

Ի Վերչէ ցտահմանս փոքուն Ասիոյ 17 ամբոցք են ընդ իշխանութեամբ Ռուսիոյ. մեծ մասն ի նոցանէ խարխալեալ և քայքայեալք են. և ոմանց պատնէչ են միայն սակաւագոյց անջատ խրբամք. թիւ ամբոցապահ զօրաց հասանէ ի հինգ հարիւրոյ ցհազար, ընդամենն ի 10 հազարէ ցքսան և հինգ այր. թանկագին, բայց անհրաժեշտ զո՛հ, զոր նուիրէ Ռուսիա քաղաքականութեանն և ապադային. զի ի ներկայումս գեռ անմարթ է տեսանել զյուսալին օգուտ. Յորժամ ազնուականք Չերքեզաց սակաւ առ սակաւ ըն-

տեղացիին Եւրոպական լուսաւորութեան, յայն-
 Ժամ ի յիշատակեալ տեղիսդ մարթ է հաստա-
 տեղ փոքրիկ բարդաւած քաղաքս և վաճառա-
 տեղիս, որպէս և երկիցս լեալ են ըստ մասին.
 զառաջինն յորժամ գաղթականք Յունաց բնա-
 կէին ի կողմանսդ. երկրորդն՝ յորժամ ի միջին
 դարս Գննուացիք փրկէին Սեաւ ծովու, և աւեր-
 եալ խանդարեցան ընդ իշխանութեամբ Տաճկաց,
 թէ և Տաճիկք դարձեալ մեծաւ ջանիւք պահ-
 պանէին ընդդէմ Ռուսիոյ, Լատի ժողովէին
 նորա զգունդս Մամբուկաց (15) և զհանանին.
 դէպ եղև՝ առ դրամիք միոյ ի փոքունց ամբողջացս
 բացաւ վաճառանոց. անդ ժողովեցան ոչ սակաւ
 Չերքեսիք, որք բերեալ էին ի վաճառ զքանի մի
 մարթս գաղանաց. սակայն ապրանք տեղւոյս ան-
 նշան ինչ գոլով չկարէին հրապուրել զաչս նոցա.
 Հարկ էր անշուշտ հոգ տանել օրինաւոր տուրե-
 առութեանն, և զայնպիսիս վաճառել իրս, որք
 ըստ նոցուն քմաց էին և պիտոյից, և այն հարա-
 զատ գնով. նոյնպէս գնել ի նոցանէ զամենայն
 իրս, իսկզբանն անդ նաև թանկ գնով. չկարեմ
 պնդել՝ թէ այս եղանակ շահաւէտ ձեռնարկ
 տուրեառութեան լինէր տէրութեանն. բայց քա-
 ղաքականութեանն յոյժ ձեռնտու. վասն զի սո-
 վիմբ մարթ է տարածել ի նոսա զԵւրոպական
 լուսաւորութիւն, սովորութիւնս, ևս և ինչ ինչ
 զարդարանս. իբրև վարժէին մասնաւոր առւտրոց,
 դրամական կիրառութեան և նշանակութեանն,
 յետ այնորիկ գուցէ թոյլ տային և Ռուս առւե-
 արականաց ածել զվաճառս յերկիր նոցա. և
 այսպէս իսկզբանն անդ թափանցէր ի նոսա նշոյլ
 կրթութեան և մարդավարութեան, և լինէին թէև
 ոչ այնչափ փութով հպատակք, գոնէ խաղա-
 ղարարոյ դրացիք Ռուսիոյ. յետ քանի մի ամաց
 յորժամ առւտուրն հաստատէր ի նոսա, մարթ
 էր տալ զայն ի ձեռս մասնաւոր վաճառականաց,
 և փութով առնէին հազորդակցութիւնս ընդ
 Սերչ և ընդ Օտեսայ:

Ի Բէզուտ - Քալէ նախաճաշիկս արարեալ առ
 Հայ վաճառականի ուրումն, պատրաստեցաք ընդ
 ուղիկցաց իմոց ճանապարհորդիկ ի ներքս երկրի.
 մեզ ետուն երիւարս, և քանի մի Քաղակս յա-
 պահովութիւն. զառաջինն ուղի հաստանէաք
 առ ափամբ ծովու դէպ ի հիւսիս ցԱնակիա,
 փոքրիկ ամրոց Տաճկաշէն, որ այժմ Բոստ քա-
 ղաքաց. առ նմին անկանի աննշան գիւղ մի Մին-
 գրիւց. աստ փոխեալ գերիւարս, դէմ եղաք ի
 Մինգրիկիա. զօրն ողջոյն ճանապարհ մեր եղև ի
 մէջ անտառաց. և որպիսի հիանալի անտառ.
 դուն ուտիք տեսեալ է իմ այնչափ թեղոջ, եղե-
 ւին, կաղին և կնձնի ծառս խառն ընդ սօսի, շա-
 գանակենի, ձիթենի, դափնի, և կեռասենի ծա-
 ոց, որոց հայրենիք թուի լինել Մինգրիկիա.
 ճանապարհն ժամանակս ինչ ած զմեզ ընդ եր-
 կայնութիւն Ինգուրա գետոյն. այս գետ կարէր
 լինել նաւագնաց, եթէ ժայռք և կործանեալ
 ծառք չլինէին արգել. յայսչափ ճանապարհոր-
 դութեանս չտեսի գիւղ մի, այլ հանդիպէաք
 աստ անդ առանձին տանց. իւրաքանչիւր որ ի
 բնակչաց Մինգրիկի ունի իրաւունս բնակիցոյ ուր
 և կամիցի ի մէջ անտառացս. որ կոտորեալ կամ
 այրեալ զճառս, շինէ ինքեան տուն փայտեալ,
 պատէ զնա ցանգով, և առ նմին պատրաստէ
 որ ինչ պիտանի է նմա ի կառավարութիւն
 տան. զօ. տեղի սերմանելոյ և ըն. հոգն բերրի է
 և տայ առատ եգիպտացորեան, կորեակ և ծխա-
 խոտ ամենազնիւ, բայց վերջնոյս մշակութեանն և
 պատրաստութեանն եղանակ անյայտ է բնակչացն.
 բնակիչք հարկս հարկանեն կալուածատէր իշխա-
 նին Մինգրիկի ի բերոց երկրի և յանանեղինաց
 ում որչափ նշանակէ իշխանն. տունք նոցա որ-
 պէս ասացաւ՝ փայտաշէն են, և ծածկեալ յար-
 դիւք եգիպտացորենոյ. դրունք տանց սովորաբար
 են երկուք, մեծաւ մասամբ դէմ ընդ դէմ մի-
 մեանց, այլ չկը լուսամուտ և ծխնելոյղ. ի մէջ
 տանն գտանի միայն մի սենեակ, յորում է վա-
 ոարանն. չկը ամենեւին կահուկարասիք տան.
 իսկ առ ունեորս գտանին երբեմն գորդք Պարսից
 և Տաճկաց. կանայք նոցա շրջին բոկոտն, թէև
 ոսկէհուռն հանդերձիւք. ի տունս նոցա չկը սե-
 ղան, աթոռ, այլ միայն օթոցք, ծառայական

(15) Մամբուկ, բառ Արարացի, որ ըստ նոցա հնչի Մամ-
 բուք. դունդ ինչ Արարացեան գորոց, կազմեալ ի զերկուր-
 եալ Քրիստոնէից, զարձեցց ի Մամեռականութիւն:

կեանս վարող Ասիացիք հակամետք են ի պաճու-
 ճանս, աղատասեր 2երբեքք, որպէս և Հին Գեր-
 մանացիք՝ սիրեն փաղփիւն զէնս, զրահս, սաղա-
 ւարտս, և ին. հանդիպեալք երբեմն երկրացւոց,
 ամենեքին սորա էին ձիաւորք. արտաքին երևոյթմ
 նոցա տարօրինակ թուէր ինձ, զգեցեալ ունէին
 երկար գօտեկապ զշիտս, եղեալ ի զուխս սրա-
 ծայր զլիարկ, որով խիտ նմանին Փրանկիսկեան
 կրօնաւորաց 16). գուցէ սուրբն Փրանկիսկոս զիւրն
 տարազ աստի ի Մինգրելաց էառ, և աւանդեաց
 հոգեւոր որդւոց խրոց. և այս շեցէ բոլորովին
 անտեղի կարծել, ըստ որում յայնժամ Գննուա-
 ցիք կարգեալ ունէին զգործակալս ի կողմանս.
 կրօնաւորական գլխարկն նոցա անուանի Բաղշ-
 լիք. Տեսաք առ սոսա և տառագոկս (եւսիտնձի)
 բարձր և լայն ծածկոյթ, որ պատասպարէ զնոսս
 ի ցրտոյ, յանձրեց և ի սապոյ, յորժամ ար-
 տաքինն առաւելու քան զտապ արեան երակաց
 մարդոյ:

Երեկոյեան զրիթէ ժամ հինգ էր հասաք ի
 Չուզդիտէ ընակեող Գատեան իշխանին Մինգ-
 րելաց, (երևի տոհմական է անունս Գատեան).
 սա այժմ հպատակ է Տէրութեան Ռուսոյ. իշ-
 խանն և ընտանիք չէին անդէն. ի տապոյ աւուրս
 ըստ որում տիրէ ի կողմանս ջերմ, ամենայն
 ձեռնհաս մարդիկ փոխադրին ի լիբինս յապա-
 հովութիւն. ըստ այսմ և յիշատակեալ զեր-
 դաստանն, այսքրիկ կողմանք բարբերս են յոյժ.
 լիճք ոչ գոն, սակայն ջերմ սաստիկ տիրէ դար-
 ձեալ ի 15էն Յուլիսի ց15 Հոկտեմբերի. պատ-
 ճառ որոյ զնեն թէ՛ ըստ որում սակաւամիւ են
 ընակութիւնք կողմանցս, և նուազ անաննդէնք:

(16) Փրանկիսկեան կրօնաւորք, անուանեցան անապատա-
 կանք կանոնապահ Ս. Փրանկիսկոսի. սկզբնաւորութիւն սոցա
 ասի լինել յամի 1525, Մատթեոս Բաքի անուն կրտսեր
 վանահայր վանից Մանսիփիտայ հաւատացեալ, թէ Աստուած
 ի տեղեան հրամայեաց նմա խնդութեամբ պահպանել զկանո-
 նադրութիւնս Ս. Փրանկիսկոսի, առնու ընդ իւր զերկոտան
 ժիւնձունս և առանձնայ յանապատս. անք թոյլտուութեամբ
 փափին Հռովմայ կաթէ նոր ուխտ, զոր հաստատեցին փափ-
 քըն Աղեմենդոս ի, Պօղոս Գ. և Գրիգոր ժԳ. սոքա ազա-
 նեն մերարկու սեաւ խորազն, ի զլուխ կնգուոյ, յոսս հո-
 ղաթափ, և ընդ մէջս գօտի ամեն փոկ կամ առասան Մ. Ք.

վասն որոյ ինչ ինչ բոյսք անբաղ և անծախ
 մնացեալ կամ ի ծմակս նեխին, կամ ի դաշտս
 չորանան. ի դարչ հոտոյ նոցա զոյանայ այս ջեր-
 մակտութիւն. յորմէ տանջին միապէս և եկք և
 ընկիք, բազում անգամ և զինուորք Ռուսաց
 զոհ՝ երթան նմա:

Առ բացակայութեան իշխանին զմեզ ընկալու
 ի տուն նորա կառավարիչ կալուածոց նորին,
 զարմանք կալու զմեզ, յորժամ զիտացաք թէ
 Գաղղիացի է սա. առ Գաղղիացի գնդապետի ու-
 բուն լիայ է խոհարար յամին 1812. յորժամ
 Գաղղիացիք խոյս տան ի Մոսքուա, զերի անկա-
 նի և մտեալ ի ծառայութիւն Ռուս զնգապե-
 տի ուրումն գայ ընդ նմա ի Տիփլիս. ուստի զինի
 յայս տեղի ի ծառայութիւն իշխանին Մինգրե-
 լաց. զմեզ աստանօր պատուատիրեցին ընտիր թէ-
 յիւ, յետ նորա՝ պատրաստեալ և մատուցեալ
 ի ճաշակ Գաղղիացի ընթրեօք, չէր պակասու-
 թիւն և Շամկանուոյ. ընդ մեզ ըմպէր զթէյ և
 Վաստայ 17) իշխանին, Մինգրելացի ազնուական,
 որ զհայրենին միայն զիտելով լեզու, նստաւ զքա-
 նի մի ժամս առանց խօսելոյ:

Գատեան իշխանն և Վաստայք նորա ունին
 զշինականս, որք բաժանին յերկուս կարգս. ա-
 ուաջինքն՝ անուանին զրան մարդիկ, զի ընակին
 շուրջ զտամբ տեանն, մշակեն զանգս նորա, և
 առնեն զայլ ամենայն ծառայութիւնս. իսկ իշ-
 խանն պարտի կերակրել զնոսս և զընտանիս
 նոցա. երկրորդ կարգ՝ սոսկ շինականք, որք մշա-
 կեն զանգս ի պէտս անձանց, միայն հատուցանեն
 իշխանին զորոշեալ տուրս ի բերոց երկրի և յա-
 նանեղինաց. չխարցի զիտել թէ այս տուրք
 ըստ նախնաւնոյ սովորութեան սահմանեալ է՝
 թէ ըստ կամս կալուածատեանն. յաւաջին ժա-

(17) Վաստայ, հպատակ, ծառայող, կամ իշխանաւոր. կո-
 չեցան իշխողք կալուածոց ի Միլին գաւրս, ստորագրեալք
 զլիւսաբ կալուածատեանն (սիւզրէն) որպիսի ոք թագաւորն
 էր, որում պատկանէր բովանդակ երկիրն. նմա երգնուին ի
 հաստատութիւն առաջնակարգ Վաստայք. և սոքա ունէին
 իրաւունս տալով այլոց զերեանց արտօմութիւնս Վաստայու-
 թեան, համարել կալուածատէր. վերջնոց ի հաւատարմութիւն
 երգնուին երկրորդակարգ Վաստայք: Մ. Ք.

մանակս Մինգրեյք և Իմերէթք բազմութեամբ զիմէին ի Արաստան ի գործ ծառայութեան կամ օրաւարձ մշակի, և ինքեանք այն ըստ բաւականին աշխատասէրք են, և ընդունակք ծառայութեան քան Արացիք, բայց արգելուն նոցա հեռանալ յերկրէն իւրեանց, զի ըստ որում սակաւաւոր են ընտելիք երկրին, մի աշխարհն անմշակ կացեալ խանգարեցի:

Արզիւնք իշխանին Գառեան, են ըստ մեծի մասին բերք երկրի. իմէ փոխանակեցէ ընդ զրամոյ, ոչինչ գոյանայ ի միջի, զի գծուարաւ վաճառի, թէ և ընդ տիրապետութեամբ նորա գտանի 100 քառանկիւնի մըն բեղմնաւոր երկիր. պատահի երբեմն, զի շարունակ ամիսս քանի մի չունի ի ձեռին 25 բուրլի, ի հօգոյ զանհրաժեշտ ծախս. գուցէ անտառք բերցնեն նմա զրամաւոր շահս, թէպէտ և այն վաճառի գրեթէ աննշան գնով:

Ար ինչ լուայ ի Տիփսիս վրինաց իշխանին Գառեան, այն ինչ վախճանելոյ, յուշ առնէ զկրահնակ կենաց Գերմանացի իշխանաց և տեսաց ժն. դարու. հանգուցեալ իշխանն անցուցանէր կեանս որսորդութեամբ կամ պատերազմելով ընդ հիւսիսական աւաղակարարոյ ցեղս. յորժամ շրջապատեալ հարիւրաչափ երիտասարդ իշխանօք և ազնուականօք կաներ յորս, հօվիւք զկեղեցանէին միմեանց զգալ նոցա, և ջանային թագուցանել զճօտ իւրեանց. ըստ որում ի հանդիպելն առանց խօսելոյ ընտրէին զքանի մի հատս, զետելին և անդրէն առ տեղեան կացեալ հուր խորովէին:

— Եթէ օտար որ կամ ճանապարհորդ հանդիպեալ իշխանին, ամենք զնա յորս, և պատահէր ի ճանապարհին ձի մի, որոյ և իցէ զայն իշխանն յափշտակեալ ընծայէր օտարականին. բայց երբեմն տէր նորա զգուշացեալ ճանապարհի հիւրոյն, յափշտակէր զընծայն, զիւր սեպհականութիւնն, ի ձեռանէ նորա: —

Ի միւսում աւուր, ի վեցերորդ ժամու առաւօտուն նստաք ի ձիս. ճանապարհ մեր ած զմեզ ընդ անտառս և լեռնէ ի լեռն. կենդանանկար տեսարանք բնութեան յանդիման լինէին մեզ փոփոխմամբ զմիմեանս. ի վեր բարձրացեալ տեսանէք զԵրբիս Առկիսուս, և ի հարաւ հայեցուածք մեր զկայ աւնուին ի լեռինս փոքուն Ասիոյ (Անա-

տօլեոյ). քանի մի գետոց անցաք ընդ հունն, ըստ որում կամուրջք աւերակաք էին ի բունութենէ քարնային ջուրց. ի մէջ անտառաց ի բարձրացոյն տեղիս գտանին հին փայտաշէն եկեղեցիք, չորք ի նոցանէ յոյժ հեռագոյնք յուղոյն. ի տեսորոց չորաք քանի մի անգամ. չիք ամենեկն շէն մի կամ բնակութիւն մերձ առ նոսա. և ոչ կրեիւր տեղի քահանայի բնակութեան կամ ժամակոչի ի շրջապատս նորա:

Երեկոյն պահու մեծաւ ներութեամբ անցեալ ընդ վտանգաւորն Զեներալ (Հիպոլուս հնոց) եկաք զիշխայն յաւանն Խոնի. սահմանեալ օր վաճառուց և աստ և ի համօրէն քաղաքս երկրին է Ռարաթ օր. նախընթացն Շարաթուն Լրէից. սովորութիւն և բարք Լրէից՝ որպէս կարծէ Շարտէն, թողեալ են զազդեցութիւն ի համօրէն արեւելքս. Աստ գտեալ վայելուչ իջւան բոստի, ողի առաք ի վաստակարելի ուղևորութենէս. աստից Տիփսիս կայ ճանապարհս բոստի. և մեզ ետուն սայրակառ մի, թէ և նստողն ոչինչ հաճութիւն և անգործութիւն զգայ ի սաստիկ ցնցմանէ սայրիցն Ռուսաց, բայց ինձ ընտրելի էր այն քան զճանապարհուկ ձիազնացութիւնն:

Յառաւօտուն կեալ անտի յինն ժամու մտաք ի Քութայիս. իջւան կողեալ ի հիւրատան Գաղղիապոլոյ ուրումն, ուր յայց եկն մեզ նահանգական տեղոյն, որ խօսէր ի լեզու Գաղղիական սակաւուք և ի Գերմանականն. սա հաղորդեաց մեզ զզանազան տեղեկութիւնս ի վերայ կողմանցս:

Քութայիս է քաղաք հնագոյն, շինեալ յեղբոր Բիւն գետոյն որ առ հինն Փագիս անուանիր. առաջին քաղաք, և շրջակայ սահմանօքն ի միասին հայրենիք Իմերեթաց. սա է ըստ աւանդութեանն տեղի ծննդեան Միսէաց, (գտտեր արքային Աողքիսայ) և մայրաքաղաք օսկիչատն Աողքիսայ. հին քաղաքն անկանէր յաջմէ գետոյն ի վերայ լիբանցն, ուր այժմ գտանին փրածոյք մետաստանի և եկեղեցոյ. նշանաւոր հնութեանց չերեի աստ մնացորդ. նոր քաղաքն ի ձախմէ կայ գետոյն:

Իմերեթք կարի գեղեցիկք են. ի դէմս նոցա նշմարի աշխոյժ մտաց և քաղցրութեան. թէ և

յամենայն տեղիս, որք ծանօթս տային մեզ առտիճանաւորք և պաշտօնակալք Ռուսաց, հաստատէին լինել սոցա ազգ առաջակարարոյ՝ ծոյրխարերայ, անարզ և յեռնեալ նշոյնպէս վստաբանէր զնոսա և այրն Գաղղլացի որ ի տանն Գատեան իշխանի, բայց ես չկարեմ գրել զայդ պակասութիւնսդ ընդհանուր ազգին:

Եյսպէս ճանապարհորդեալ եկաք յինն Օգոստոսի ի Գորի զիւղաքաղաք, զառաջեաւ որոյ անկանի իջլանն բոսորի, աստուտ պատկերանայ չքնաղ տեսարան, ի հիւսիսակողմն են սառնապատ լեռինք Վովկասու, յորս բարձրագոյնն են կատար Էլբորուսայ և Վազբեկայ, ի հարաւոյ լեռինք Ախալցխայի Էլբորուսէ բարձրագոյն լեռն առաջաւորն Ասիոյ ի շղթայս Վովկասեան իրանց, որ ունի 18,000 սանաչափ բարձրութիւն, որով գերազանդէ զՄօնղան կրեկի լեռնն Եւրոպիոյ 4,000 սանաչափով: Չանաղան անուամբ կոչի Էլբորուս, Թաթարք անուանեն զսա «Եպրուզ դաղը» (ոսկեղօծեալ լեռն), յոսկիճաճանչ նշուից առաւօտեան արշաղուսոյն տեսալ, որ զարդարէ ըզգազաթ նորա, կամ Էլբորուս, Հայք «Եպրուս», Չերքեզք «Ռախշամախօ», կամ «Օշղա-Մախուա», (սուրբ կամ երջանիկ լեռն), Վարաչիք «Մինգիտաու», Արաք «Օրֆի-Իֆղուս», կամ Իտուս, Սլաննեք «Պասսա», Խաղախք «Շատգարա»:

Իսկ Վազբեկէ էառ զանուես ի Ռուսաց ի պատիւ Վազբեկ զօրապետին, որ բնակի ի ստորտառ նորա և է յոյժ հաւատարիմ Ռուսաց, Ախրք անուանեն զսա «Մքինվարի», (ստոնապատ լեռն, կամ ստոնարան), Օսեկք «Ցրրիտտի-իւր», (լեռն Բրիտտոսի), Չերքեզք «Ռերր-խոխ», (սպիտակ լեռն), յաւանդութիւնս բնակչաց Վովկասու մինչ ցարդ պատմի զՊրոմեթէսայ, այսպէս, Պրոմեթէս ստեղծ զաշխարհ և զմարդիկ, և հակառակ կամաց ամենաբարձրոյն Աստուծոյ ետ մարդկան զկայծ հրոյ (պտուղ ծառոյն բարւոյ և չորի), վասն որոյ մերժեաց զնա Աստուած և կապեաց շղթայիւք ի վերայ անզընդոց, զայս առասպել Յոյնք պատմեն ըստ այսմ, Պրոմեթէսս գողցեալ զուր յերկնից՝ ետ մարդկան զօրս ինքն ստեղծ, ուստի Չևս (Արամազդ)

հրամայեաց ցանդ ունել զնա ի ժայտս Վովկասու, ժայտս այս՝ ըստ ցուցանելոյ ռուսեմեականաց է Վազբեկ, հետք առասպելաբանութեանս թուի թէ կայ մնայ և առ Արխաղս բնակեալս ի շրջակայս Էլբորուսայ, ըստ որում պատմեն սորա թէ ի քարանձաւէն լսին հառաչանք և ձայն շղթայից, Աւանդի ևս թէ ոմն ի նոցանէ յաւուր միում մանալ ի խորագոյն սորոյ, երիտ անդ զհսկայ մի, որոյ տեսեալ զնա ասէ, «Հողածին դու, որ յանդրանեցար զալ այսր, պատմես ինձ, որպէս կենցաղավարին մարդիկ ի վեր (յերկրի), հաւատարիմ է կին՝ առն, հնազանդ է դուստր՝ մօր, և որդի՝ հօր», և յորժամ Արխաղն պատասխանեաց զայն, կրճտեաց հսկայն զժամիս իւր և գոչեաց, «Իսկ ինձ տակաւին կայ մնայ հիծել աստէն», և յսպիսի առասպելս և աւանդութիւնս արեւելեաց անթիւս գտանելք ասացեալս ի վերայ զիսաւոր երկուց լեռանց Վովկասու, որպէս և սօրին են:

Տարանն նոյի նախ զառաջինն քերեաց զգազաթ Էլբորուսայ, ապա էանց հանգաւ յարարատ (18), ուստի ոչ որ համարձակէ սոն միւս ի նա առանց Աստուածային հրամանի:

Բ. Չրապաշտ (Չորոսատր) նշանակէ զԷլբորուս տեղի բնակութեան Արշմնի թշնամոյն Արմզլի, Գ. Ի գազաթ Վազբեկայ գտանի իրք թէ Բիւրիկեաց ամրոց և մերձ առ նմին տաճար Աստուծոյ, յորում սաւառնի աղանին ստիկ, ի մէջ ժայռիցս ստորե քան զձիւնապատ սահմանս, քարայրք են անհամարք, բնակարանք հրէշից (19)

(18) Հայ ընթերցողն յաչ անել անի պատուազանութիւնն ի մեզ գրգուռ լեռնն որ բարձրութեամբ իւրով երկրորդն է ի լեռնս Հայոց, զի ասի, յորժամ տապանն նոյի յեա ծփեց յերես ըտրց ևճառ ի վերոյ Գրգուռ լեռնն, ասէ «Գրգուռ, առ զիս», և նա պատասխանէ «Երթ ի Մասիս, որ բարձր է քան զիս»: Տես Աշխարհագր. հօր Հայաստ. բնօրինակի երես 178, Կ. Ք.

(19) ТРОГЛОДИТЫ Восточные Срегокопавши, ի բառիցս արդէ լի, «այր, քարանձաւն, և տիւս, սխորասպի կամ ի խոր մտանելս»: Առ ճին Հելլենոս համարիւր եւսագլխեան զազան ինչ ստեղծի բնակեալ յայսր խորարկնս, զարեւալ իմանին բառիս, ստորեակն ճին ժողովուրդ Արիւրիկէ, այժմ արդարօր կոչի տեսակ ինչ կապեաց հօր աշխարհի (Ամբրիկայի), ի մեր

(Տրողլոյիտաց) իսկ զկնի լիցին բնակութիւն խտակրօն արանց. աստ առկախեալ կայ երկաթեայ շղթայ, տեսանելի միայն հաւատաշատ անձանց:

Դ. Անդ է վրանն Արրահամու, և Որորան Փըրկչին:

Է. Եւ ըստ այլոյ աւանդութեան, ի Պովկաս, և գլխաւորապէս յերկոսին լերինս յայտոսիկ, բնակէին քաջք մինչև ցԱղամ. իրրե ի մեղս անկան նորա, աստի ի բաց վարեաց զնոսա Աստուած, զերկիրն տուեալ ընդ իշխանութեամբ Արամայ:

Ը. Պարսիկք պատմեն, թէ Հաշէնկ պատեւրազմեցաւ ընդ այսոցիկ քաջաց, հեծեալ ի ձի երկատասանոտեան. իսկ քաջք զորեալ ի վերայ նորա զվէմն, սպանին զնա, և թաղուաւ ի ներքոյ Պովկասու Հին աւանդութիւնք մարդկային սեռի՝ են աւանդութիւնք արեւելեան Աօրացւոց (Իրանաց և Թուրանաց). և ակնարկեն ի Պովկաս իրր ի բազումս. յետ տարածելոյ Մահմետականութեան զհետ եկին և նորանորք ոչ սակաւ որպիսի են.

Թ. Յայնկոյս պարսպին մեծի, երկայնկոյ ըզթիկամք Պովկասու, և ձգելոյ ընդ մէջ Սեաւ ծովու և Վասպից, բնակին Գոդ և Մարդ. որք զկնի անցեալ ընդ ծովն, աւերեսցնն զիշխանութիւն ուղղահաւատից (Մահմետականաց). և զայս Մահմետի թուի ասացեալ:

Շ. Ըստ Մահմետականաց, ի վերայ Պովկասու գտանի թաղաւորութիւն քաջաց 20), որք

արարան ի հրոյ, նախ քան զԱղամ. սորս ունին զամենայն պիտոյս մարդկային, ըմպելի ուտել, ամուսնանալ (նաև ընդ մարդկան). բազումք ի նոցանէ ունին զկրօն Մահմետի, իսկ մեծազոյն մասն է անկրօն. յոյժ նման սորին է և աւանդութիւն ինչ առ Գերմանացիս յաղագս ոգւոց Սասնովեան լիբանց, զորոց ասնն տգօթի ծածուկ յեկեղեցին Քրիստոնէից, արշաւել ի թևս փոթորկաց, և բնակել ի քայքայեալ սունս, բազանիս և հնոցս:

ՅԱրարիս, երեւակայնն զոսսա ի ձև սեան, և ասնն յամայի դարձուցանեն, ուր երթանն. այլ ըստ որում զարշին յերկաթոյ, ուստի մարմ է հալածել զնոսա եթէ որ անցէ ի բերան իւր զայս բան էլ հոգի՞ այս ինքն ո՞վ երկաթ. Ասնն զարձեալ թէ ի կերպարանս ճիւղաց և խօլահանաց գտանին ի բուրգս և ի դերեզմանս. կարեն աւնուլ նաև զկերպարանս մարդոյ և զազանաց, Մահմետականք համարեն թէ բուրգք կանգնեալք են ի Հան-Բն-Հանոյ, վերջին թաղաւորէն քաջաց. ուղղահաւատ ազգք (ասնն) բարեգործք են, այլ դիւրագրողք, իսկ անհաւատք վատթարք և ատելիք մարդկան. բազում անգամ հրեշտակք արեւաննն զնոսա յամպոց ի վայր սակրս չարեացն զոր գործեն, (աստեղք սահալք). քաջք երկին առաւելապէս յառաջին տասն աւուրս և զիշերս Մուհարէմ ամոնյու. Իսկ Գերմանական սնտիապաշտութիւնն ժամանակ սայ սոցա երեւոյ զառաջին զիշերան այն է ի միջոցս Ծոնդեան Աստուածայայնութեան և նորոյ տարւոյն. որպէս յԱսիա ի Պովկաս, նոյնպէս ի Գերմանիա յԱլպեան լերինս. նախապաշարումն տեղի շնորհէ բնակութեան քաջաց. Չերքեղք հաստատան զԷբորուսայ լինել մայր աթոռ զխաւորին (Փաթիշահին) նոցա:

(Շարանալէլ):

Լեզու ցոյս բառ հրէշ անուանեցաք, չգիտեմ ընդունելի լիցի ընթերցողաց, թէ ոչ Մ. Թ.

(20) Дажинны, ձին կամ ձէնք, բառ Արարացոց. յԱրարիս, յերկրտաս, յԱսորեստան, և ի հիւսիսայինն Ափրիկէ ձին կամ ձէնք անուանին ոգիք չարք կամ բարեք. հին Հելլենք զայսպիսի ոգիս անուանէին Գեման. ի մեղ կոչին քաջք, հաւանական է թերևս ասել թէ աւանդութիւնն ի մէջ բերեալն ի հեղինակէն, որ այսպիսի ոգւոց տեղի բնակութեան կարգէ զԷբորուս, ի մէջ անցեալ են առ գրացի ազգս. վասն զի առ կապալաշտական ժամանակի Հայս, բնակութիւն քաջաց համարէին լերինք, և զԼիաւորապէս Մասիս, ուստի և առաւ նմա ի մեղ մակդիրս «Ազատ», ըստ որում համարէին թէ ոչ ոք կարէ մերձենալ ի բնակարան քաջաց, և եթէ ոք յանդգնեցի սան մեկել ի նա, քաջք կաշուա կապին զնա, յո

նեղանելի վիճա խաւարչտին ի յախտեան, որպէս զԱրտուադ զայ Երկրորդէ առտապիւեալ աւանդութիւն մ'նայ.
«Քաջաց ասնն զնա կաղեալ,
Յազատ Մասեաց լերին տարեալ,
Անդ զՊոյսիք պարաւանդեալ,
Զի մի ասնն զայս տեսեալս և ընդ»
Մ. Թ.